



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

803

OSney

8595

4-35

1891

1891

17.7.2003

859-93

4-35

ՊԱՐՄԵՆ ՍԻԼՎԱ

(Ե. Բ. ԲԱՅԵԹ, Թ. Ա. ԳՈՒՆԻ ԲՈՒՄԵՆԻՆԵՐ)

# Օ Մ Ո Ւ Լ

Մանկական վեպ

Թարգմանիչ

ԳՐԻԳՈՐ ՀԱՆՆՈՒԳԱԴԵԱՆՑ

ԹԻՖԼԻՉ

ՅՈՂԱՆՆԵՐ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԲԵՆԵՆ ՓՈՂՈՑ, № 1, 2.

1891



859-93

4-35

ար

Հայ-Պարսկական Ինքնագրութեան Բնագրաբան

**ՄԱՐՄԷՆ ՍԻԼՎԱ**

(ԵՂԻՍԱՅԵԹ, ԹԵԳՈՒՆԻ ԲՈՒՄԻՆԻԿՅ)

# Օ Մ Ո Ւ Լ

Մանկական վեպ

Թարգմանեց

ԳՐԻԳՈՐ ԶԱՅՈՒԳԱՂԵԱՆՅ

**ԹԻՓԼԻՍ**

Յովնանէս Մարտիրոսեանցի տպարան, Օրբէլեան փողոց, տ. 1/2

1891



դեռ քիչ էր թուում նրան և ամենևին չէր կարողանում գոհացնել նրա ջերմ սրտի ծարաւը:

Նա, ինչ ուզում է լինէր, կամենում էր պարզել մարդոց երջանկութիւն, և քանի որ տեսնում էր, թէ աշխարհիս երեսին կայ կարօտութիւն, վիշտ և ատելութիւն, նրան թուում էր, թէ իւր կեանքը մարդոց համար անօգուտ էր անցել:

Նրա մայրը գեղեցիկ թագուհի էր, որին ամենքը սրբի պէս էին պաշտում: Նա հիւանդներին բժշկելու այն շնորհն ունէր, որ դնելով նրանց վրայ իւր ձեռքը՝ առողջացնում էր: Եւ ամեն կողմից հաւաքւում էին նրա շուրջը տառապեալները՝ նրանից բժշկուելու: Թագուհին տեղափոխուեցաւ լեռները. ժողովուրդը դիմեց նրա հետ լեռները և նա բժշկում էր հազարաւոր հիւանդներ: Քայց շուտով անմխիթար թախիծը և ոյժից վեր աշխատանքը մաշեցին նրա մարմինը և նա մտաւ անկողին, որ այլ ևս երբէք չը վեր կենար այն տեղից: Հիւանդները շարունակում էին խըռնուիլ և նրա դագաղի մօտ. միայն դագաղին մերձենալը վերադարձնում էր նրանց կորցրած առողջութիւնը:

Նրա միակ որդուն թագաւորը չը թողեց նրա հետ լեռները գնալու. բայց պատանին ծածուկ փախչում էր նրանից և անց էր կացնում մօր հետ մի քանի ժամեր, համբոյրներով ծածկելով այն գեղեցիկ շրթունքները, որոնցից մեղրանման խօսքեր էին ծորում, և այն հրաշալի ձեռքերը, որոնք պարզել էին աշխարհին այնքան ոյժ և առողջութիւն:

—Մայրիկ, հարցնում էր նա երբեմն,—մարդիկ առաւել բարի են դառնում, երբ դու նրանց բժշկում ես:

—Երբ մարդս առողջ է, ապա նրան աւելի դիւրին է բարի լինել, պատասխանում էր նա, շոյելով պատանու գեղեցիկ մազերը:

—Քայց հենց ահա, թէկուզ ես...: Ես հօ առողջ եմ, բայց ո՛չ ամենևին բարի:

—Մի անգամից բարի լինել չի կարելի, որդեակ, այլ պէտք է ուսանել բարի լինել:

Այդպէս էին խօսում մայրական գեղեցիկ շրթունքները, որոնք այժմ յաւիտեան լուել էին: Յուսակտուր պատանին դիակի մօտ գետին փռուեցաւ:

—Ո՛հ, ես չեմ կարող, չեմ կարող առանց մօրս ապրել, ասում էր նա: Մայրիկս, սիրելի մայրիկս, վերկաց, ամօքիր իմ սիրտս: Նա վշտաբեկ է, հոգեախօ, վերկաց ուրեմն, բաց աչերդ, զարթնիր, իմ թանկագին մայրիկս:

Մարդիկ լուռ կանգնած էին մեռած մօր և դառն հեկեկող որդու շուրջը: Ո՛չ ոք չէր վստահանում մխիթարել նրան:

Եւ ի՛նչ կօզնէր նրան մարդոց մխիթարանքը: Նրան ի՛նչ փոյթ, թէ դագաղի ետեւից գնում էր բոլոր ժողովուրդը, տխրութեամբ ուղեկցելով իւր բարի խնամակալուհուն դէպ յաւիտենական հանգիստը: Նա զգում էր միայն իւր սարսափելի վիշտը, որը այնպէս կեղեքում էր նրա հոգին ու մարմինը, որ նոյն իսկ՝ «Յերեկը մութ էր շրջում արեգը. գիշերը թաց աչքին՝ քունը մօտ չէր գալիս»:

Այն աշխարհում, որը թողեց նորա մայրը, նա մնաց միայնակ, ինչպէս դալար խոտը՝ աւազուտ անապատում:

Երբ մօր դիակը հողը իջեցրին, պատանին անշուշտացաւ, և ոչ ոք չիմացաւ թէ ուր գնաց: Տեսան միայն, ինչպէս նա, դառն հեկեկալով, գէն ձգեց թիակը, որով պետի հող ածէր մօր դագաղի վրայ. այնուհետև այլ ևս ոչ ոք չէր տեսել նրան: Թագաւորը հրամայեց ինչրակներ ուղարկել բոլոր երկիրները, իւր թագաւորութեան ամենահեռաւոր կողմերը, բայց պատանին կարծես, գետինը ճեղքել՝ մտել էր: Արքայորդին՝ ու թագածաւանդը կորել էր:

\* \* \*

Այ՛ ոք չը գիտէր, որ Բուչէջիի քարանձաւներում բնակում էր մի ճգնաւոր. բոլորեքեան նրան արդէն մեռած էին համարում. նա ապրում էր լեռների այրերում. գիտէր այդ միայն թագուհին, որ միշտ նրա բարեկամն էր: Մեռնելիս՝ նա իւր որդուն այդ միայնակեցին յանձնեց:

—Սուրբերնու ինձ բարի լինել, ասաց պատանին, մտնելով միայնակեցի այրը: Եւ հասնելով ամենամութ անկիւնը, նա գետին ընկաւ և մի քանի ժամ շարունակ այնպէս սաստիկ հեկեկում էր, կարծես թէ կամենում էր արտասուելով ամօքել և՛ սիրտը և՛ աչերը:

Ծերունին լուռ էր և միայն երբեմնապէս տանում էր իւր սոկրացած ձեռքը գէպի խորշումած գէմքն ու մորուսը, և սեղմում մթնացած աչերը, աշխատելով ճնշել արցունքները:

—Էմանուէլ, գաւակս, աշխատիր այնպէս լինել, ինչպէս որ նա էր, և այնուհետև բարի կը դառնաս, ասաց փերձապէս ճերունին:

—Բայց նա չունէր այնպիսի ջերմ սիրտ, ինչպէս ես:

—Միթէ դու այդ ճիշտ գիտես: Քեզ ո՞վ է ասել, թէ նա էլ մի ժամանակ այնպէս չէր, ինչպէս և դու:

—Ինչպէս ես: Այդ անկարելի է:

—Ա՛խ, մանուկ, մանուկ: Քեզ հասել է գեռ առաջին վիշտը, և դու արդէն կարծում ես, որ գրանկից առաւել մեծ վիշտ չը կայ աշխարհումս: Գու աչժմ մտածում ես միայն քո մասին, իսկ նա երբէք այդպէս չէր վարում:

—Բայց ուրիշ ո՞ւմ մասին մտածեմ: Չէ որ այժմ էլ ինձ համար ոչ ոք չի մնացել:

—Ո՞ւմ մասին:

Ճգնաւորը ցոյց տուեց նրան հովիտը և յանկարծ պատանու առաջ մինը միւսի ետևից անցան այն բոլոր տանջանքների պատկերները, որպիսիք միայն կան աշխարհիս վրայ: Կաղերը, կոյրերը, անդամալոյճները, աղքատները, բանտարկեալները, հիւանդները, արտասուող մանուկները, հեկեկող կանայք: Սր ու զիշեր անցնում էր այս տխուր քարաւանը: Երեք անգամ ծաղել էր արևը, երեք անգամ սահել էր երկնքում լուսինը, իսկ գունատ, տառապեալ գէմքերը գեռ էլի անցնում էին պատանու աչքի առաջ: Վերջապէս ճգնաւորը զրեց նրա յոգնած աչքի վրայ իւր ձեռքը և նրանք փակուեցան:

Ծերունին զրկեց նրան, տարաւ քարայրը, տուեց կաթը խմելու և ստիպեց քնել: Երկու օրից լետ պատանին զարթնեց առողջ և աշխույժ:

—Այժմ գիտես, թէ ո՞ւմ համար պէտք է ապրել, հարցրեց ճերունին:

—Այ՛ո, պատասխանեց Էմանուէլը, կարծես թէ դեռ էլի երազումն էր, ես այնպիսի սարսափելի երազներ տեսայ, կարծես թէ ամբողջ աշխարհը ման եմ եկել:

—Այժմ գնան և ծառայիր: Աչ ոք քեզ չի ճանաչիլ: Իսկ եթէ քեզ հարկաւոր լինիմ,—միայն մտածիր մօրդ մասին, և դու իսկոյն ինձ մօտ կը լինիս: Բայց տես, զգուշացիր սր և է վատ բան անելուց: Հէնց այն րոպէին, երբ դու կը մեղանչես, մօրդ պատկերը կանայտանայ ասքիցդ և դու երբէք չես գտնիլ քարայրիս ճանապարհը:

Էմանուէլը երգուեց ձգնաւորին բարի լինելու, հրաժեշտ տուաւ նրան և գնաց հովիտը իւր համար գործ գտնելու:

\* \* \*

Նա դեռ չէր հեռացել ձգնաւորի քարայրից, որ պատահեց մի պառաւի: Պառաւը հագիւ հագ կարողանում էր տանել մի ինչ որ կապոց. բայց բեռը նրա ոյժից վեր էր, և պառաւը յաճախ կանգ էր առնում շունչ քաշելու:

Պատանին մօտեցաւ նրան, ողջունեց և սիրով առաջարկեց տանելու նրա կապոցը ուր և կը կամենար:

Պառաւը տխրութեամբ նայեց նրան և ասաց.

—Ա՛խ, որդեակ, այս բեռը ծանր է, իսկ ճանապարհն երկար ու անտանելի:

—Ապա աւելի ևս պէտք է օգնեմ ձեզ, պատասխանեց Էմանուէլը, շալակեց բեռը և քայլեց այնպէս դիւրաշարժ և արագ, որ պառաւը գծուարութեամբ էր կարողանում հետեւել նրան:

Այդպէս գնում էին նրանք մինչ կէս գիշեր և վերջը կանգ առան մի փոքրիկ խրճիթի մօտ:

Էմանուէլը ցած գրեց իւր բեռը, ողջունեց և ուզում էր հեռանալ:

Պառաւը նայեց նրա երեսին և ասաց.

—Ինչպէ՛ս, դու ուզում ես գնալ առանց որևէ վարձատրութեան. բայց ո՞ւր կը քնես գիշերս:

Էմանուէլը ցոյց տուեց նրան գետինը:

—Աշխարհումս, փառք Աստուծոյ, անկողին շատ կայ, ասաց նա ժպտալով:

—Ա՛յ, որդեակ, այդպէս լաւ չէ: Կան ինձ մօտ, այս գիշեր միասին կուտենք, կը խմենք. պաշարը երկուսիս էլ բաւական է:

Պառաւն սկսեց ընթրիքի պատրաստութիւն տեսնել, և երբեմն երբեմն հարց ու փորձ էր անում նրան, թէ ո՞ր տեղից է գալիս և ո՞ւր է գնում:

—Ես գալիս եմ անապատից և ուզում եմ ծառայել,— ասաց Էմանուէլը:

—Բայց ի՞նչով կարող եմ քեզ վարձատրել, որդեակ:

—Ի՞նձ, ոչնչով:

Պառաւը պատրաստեց նրա համար անկողին և նա քնեց քաղցր քնով:

Առաւօտեան արշալուսին նա վեր կացաւ և կամենում էր կամացուկ հեռանալ, որ չը զարթեցնէր պառաւին: Բայց վերջինս արդէն ոտի վրայ էր և պատրաստել էր նրա համար կաթ և հաց: Պատանու համար շատ ծանր էր ընդունել այդ: Բայց պառաւն ասաց.

—Յղուտ քաղի՛ր ամեն լաւ բանից, ո՞ւր որ գտնես, լինէր այն մինչև անգամ մի աւելորդ քառորդ ժամուայ հանգստութիւն, բայց և այնպէս առանց պարզելի քեզ չեմ

բաց թողնիլ: Ահանքիդ ասպարիզում դու առանց այդ էլ շատ ասերախառութեան կը հանդիպես: Ես շնորհում եմ քեզ մի պարզեւ, մի այնպիսի պարզեւ, որ այն ամեն բարիքը, որ դու ուրիշներին կանես՝ կը դառնայ քո սեփական օգտին, միևնույն է, մարդիկ գրա համար քեզ շնորհակալութիւն կանեն թէ ոչ: Բայց ընդ նմին և այն չարքքը, որ դու կը հասցնես ուրիշներին, դիտից կը թափուի, թէ՛ և մարդիկ գրա համար չը բարկանային անգամ: Գու այս մասին լաւ մտածիր, դուստր, և ասածս երբէք չը մոռանաս:

Իմանուէլին այդպիսի բնական շատ տարօրինակ երևեցաւ, և նա չը զիտէր, ուրախանար թէ տիրէր: Այնուամենայնիւ նա շնորհակալութիւն արու պառաւելն և ճանապարհը շարունակեց:

\* \* \*

Յանկարծ նա տեսաւ մի ծերունի, որ գլորուել էր ժայռից և բնկած էր կիսամեռ. անբունքարով նա կրկնում էր.

— Զաւակս, ինձ իմ գաւակս:

Իմանուէլը զգուշութեամբ բարձրացրեց նրան և տարաւ տուն: Ճանապարհն այնքան էլ կարճ չէր, իսկ ծանր բեռան տակ առաւել երկար էր երևում: Գրան շէմքին այնպիսի մի գեղեցիկ արարած էր կանգնած, որպիսին Իմանուէլը երբէք չէր տեսած: Գա արդէն փոքր աղջիկ չէր, բայց ոչ էլ հասուն օրիորդ, մեծ խելացի աչերով, և սև սաթի պէս մազերով: Տեսնելով ծերունուն, որին գրկած տանում էր Իմանուէլը, աղջիկը յուսահատուած՝ ձեռքը ծնկներին խփեց:

— Հայրիկ, գոչեց աղջիկը և նրա շուշանագոյն դէմքը գունատուեց այն պատի պէս, որի մօտ կանգնած էր նա:

— Բան չը կայ, միամտացնում էր նրան Իմանուէլը, նա միայն փոքր ինչ ջարդուած է: Մենք նրան շուտով կը բժշկենք:

— Բնգա, դաւակս, հառաչում էր վիրաւորեալը, — եթէ ես մեռնեմ, ապա մի լաց լինիր ինձ համար: Գու դեռ շատ, շատ երջանիկ կը լինիս:

Այս ասելով, ծերունին ուշաթափուեցաւ և այդպէս մնաց մի քանի ժամանակ: Իմանուէլը չէր հեռանում նրա անկողնուց, և խնամում էր նրան, որպէս նրա ամենատիրելի հարազատ գաւակը:

Փոքրիկ Բաղան լսում էր նրա ամեն մի խօսքը, կարծես թէ նա իւր մեծ եղբայրը լինէր: Նա դեռ յոյս ունէր, որ հայրը կառողջանայ:

— Առանց նրան ես աշխարհումս անտէր՝ միայնակ որբ պէտք է մնամ, պտոււ էր նա և աղիւղորմ արցունք թափում:

Իմանուէլն ու Բաղան երկուսով օր ու գիշեր հիւանդի մօտ էին անց կացնում: Երբեմն Բաղան խոնարհում էր գլուխը հօր բարձի վրայ և յոգնածութիւնից նիրհում:

Մի անգամ, երբ աղջիկը քնած էր, հիւանդը ուշքի եկաւ, աչքը բաց արաւ, սեղմեց Իմանուէլի ձեռքը, խորը նայեց նրան և ասաց,

— Բնգա...:

Իմանուէլը պտոտախիտեց, մտերմաբար սեղմելով նրա ձեռքը. ծերուկը նորից փակեց աչերը և հողին աւանդեց: Պատանին այս տեսաւ, բայց դեռ նստած էր իւր

տեղը անշարժ, որ չը խանդարէր մանկան քաղցր քունը, մանաւանդ որ այսուհետեւ խեղճ աղջկան սպառնում էր մեծ վիշտ:

Երկար մտածում էր նա, թէ ինչ անէ խեղճ որբուկին:

—Ա՛խ, եթէ կենդանի լինէր մայրիկս, մտածում էր նա:

Բայց յոգնածութիւնը չաղթեց: Յիշելով մօրը և մտածելով թէ այժմ ինչ լաւ կը լինէր նրա ինամքին յանձնելու գեղեցիկ Բագային, նա պառկեց գետնին և մի ակնթարթում արդէն ծերունի ճգնաւորի մօտ էր:

—Յէ՛ր ինձ մօտ նրան, ասաց միայնակեացը և ես կը դաստիարակեմ նրան քեզ համար:

—Բայց մի՞թէ դու արդէն ամեն բան գիտես, հարցրեց զարմացած Էմանուէլը:

—Ես ամեն բան գիտեմ, ինչ քեզ է վերաբերում: Ինձ բոլորը պատմում է քո մայրը: Նա ամեն տեղ հետեւում է քեզ: Թող ինձ մօտ երեխային, իսկ ինքդ գնա՛ դարձեալ ծառայելու:

Էմանուէլը կարծում էր, թէ այս ամենը երազումն է տեսնում: Բագան շարժուեց և կարծես թէ զարթեցրեց նրան:

—Հայրիկա, հայրիկա, աղաղակեց նա, նայելով հանգուցեալի անշարժ դէմքին:

Պատանի ընկերն ու խնամակալը բռնեց նրա ձեռն ու ասաց.

—Նա քեզ ինձ յանձնեց. այժմ դու իմ քոյրն ես: Ես մի տեղ գիտեմ, ուր քեզ համար լաւ կը լինի: Կուգե՛ս ինձ հետ գալ:

—Ո՛ւր ուզես, կը դամ, պատասխանեց լայով աղջիկը: Զէ՛ որ այժմս ես՝որբ եմ, ոչ ոք և ոչինչ չունիմ աշխարհումս:

\* \* \*

Նրանք հողին յանձնեցին ծերունու մարմինը և միմեանց ձեռքը բռնած, զիմեցին ճգնաւորի քարայրը, ուր հասան իրիկնագէմին: Էմանուէլն զգաց, որ իւր ձեռքումն եղած փոքրիկ ձեռքը սառեց և դողաց:

—Մի՛ վախիր, ասաց նա աղջկան, ես տանում եմ քեզ մի շատ բարի ծերուկի մօտ: Նա լաւ կը խնամէ քեզ:

Ճգնաւորը նայեց Բագային այնպիսի հեղ հայեացքով, որ աղջկայ երկիւզը իսկույն անցաւ և մի քանի րոպէից նա արդէն խօսում էր նրա հետ կատարեալ վստահութեամբ:

Միւս առաւօտը վաղ ճգնաւորը զարթեցրեց Էմանուէլին և ասաց նրան.

—Ազատիր աղջկան քեզ հետ անջատման նոր վշտից, ճանապարհ ընկիր այժմ իսկ: Ես կողջունեմ նրան քո կողմից, իսկ դու գործիդ գնա՛:

Էմանուէլը մի անգամ էլ քնքշաբար նայեց քնած աղջկան: Նա այնպէս հանդարտ էր շունչ քաշում, որ ծանր կուրծքը հազիւ նկատելի կերպով բարձր ու ցած էր անում:

—Ինչպէ՛ս կուզենայի մնալ. այստեղ այնպէս լաւ է, հառաչեց նա:

Բայց միայնակեացը սիրով և հաստատամտութեամբ դուրս բերեց նրան քարայրից:

—Գու՛ր զեռ ոչինչ չես արել, որդեակ, և իրաւունք չունիս հանգիստ և խաղաղ կեանք վայելելու, ասաց նա:

\* \* \*

Էմանուէլը նորից իջաւ հովիտը և հանդիպեց այն տեղ թագաւորի՝ իւր հօր ծառաներից մէկին: Այս մարդը իւր համար ցախից և կաւից խրճիթ էր շինում, իսկ նրա կինը բանում էր՝ նստած երկու փոքրիկ մանուկներէ հետ: Ծառան ալւարել էր և տասը տարով աւելի մեծ էր երևում, քան թէ թագուհու մտհուան ժամանակն էր եղել, բայց Էմանուէլը ճանաչեց նրան և քիչ մնաց՝ որ կանչէր «Յղիւ», սակայն դուպեց իրան:

—Այդ ինչ ես շինում, հարցրեց պատանին:

—Տես, ահա օթեան եմ պատրաստում ինձ համար, պատասխանեց Յղիան: Առաջ ես այդպէս խեղճ չէի, ինչպէս այժմ: Ես երկար տարիներ ծառայում էի թագաւորի մօտ, ձեռքերիս վրայ ման էի ամուսնում նրա որդուն, բայց երևում է, որ ինձ հարածում էր չարաբաստիկ աստղը. ինձ՝ կնոջս ու զուակներին դուրս վաճառեցին պալատից:

—Քաց ինչու:

—Նրա համար, որ արքայազնը տնից փախաւ՝ յայտնի չէ ուր. և այն բոլոր ծառաներին, որոնք չէին կարողանում գտնել նրան, ծառայութիւնից դուրս էին անում: Քանի արքայազնը թագաւորի մօտ էր, հայրը այնքան շատ էլ չէր հոգում նրա մասին, իսկ ահա այժմ նրան թուում է, որ եթէ նրան չի գտնիլ, նոյն իսկ երկինքը փուլ կը գայ իւր գլխին:

Ասեմք թէ այս երկար չի քաշել, նա շուտով կը մոռանայ իւր ցար և դեռ այժմ կարծեմ մտածում է կրկին ամուսնանալու: Հէնց որ նոր թագուհին որդի կը ծնի, նա անդրանիկ արքայազնի մասին չի էլ մտածիլ: Իսկ ես ու

կինս հէնց այդ արքայազնի պատճառով այսպէս աղքատացանք ու տնից տեղից զրկուեցանք:

—Չեմ կարող արդեօք մի բանով օգնել քեզ:

—Գու, գլխից մինչ ոտը արհամարհանքով աչքի անցնելով, ասաց Յղիան, ինչով ես ուզում օգնել ինձ: Գու ինքդ ով ես: Ընտենդ ինչ է:

—Ինձ կոչում են Մանօիլ, ես կուզեմայի քեզ օգտակար լինել: Ես լաւ բանջարանոց պահելի զիտեմ:

—Մանօիլ... իսկ երիտասարդ արքայազնին կոչում էին Էմանուէլ: Թող Աստուած նրան պատժի, որ ինձ այսպէս անտուն անտէր թողցի: Իսկ դու, շրջմոյիկ, գուցէ ինձ միայն ցաւ ու դժբաղդութիւն պատճառես:

—Քաց այդ գու վերջը կը տեսնես: Գու հօ միշտ կարող ես ինձ դուրս անել, եթէ ես վատ բանուոր լինիմ:

—Գու միայն գուր տեղը սրգոցս հացը կը կտրես:

—Քաց տեսնեմք, գու միայն փորձիր:

Յղիան ուսերը թափ տուեց:

—Ի սէր Աստուծոյ, շրջմոյիկ, եթէ գու մաքումդ մի վատ բան ունիս, ապա տեղի լաւ է հեռացիր, գնա: Եթ անողոք կը լինիմ քեզ հետ, ինչպէս որ ուրիշները անխնայ վարուեցան ինձ հետ:

Պեռ չէր միմնել, իսկ պատանին արդէն վարել էր բանջարանոցի կէտը. միևնոյն ժամանակ նա կարողացաւ արմտիք հաւաքել և համեղ կերակուր եփել: Զարմանալի արադութեամբ էր բանում նա: Ազն վազեց քաղաք և զրաւ զրեց իւր վերարկուն, ստացած փողով առաւ եգիպտացորեն ու այժ, որը և ուրախ—ուրախ բերեց տան: Եւ

ինչպէս ուրախացան մանուկները, ինչպէս գզուում էին նրանք Էմանուէլին նրա այս բարերարութեան համար: Քայց Եղիան միշտ տրտնջում էր, միշտ զժգոհ էր պատանուց, երբէք չէր ասում նրան մի քաղցր խօսք և շատ վատ էր կերակրում նրան:

Եղիան աշխուժանում էր և առաւել բարի էր դառնում միայն այն ժամանակ, երբ Էմանուէլը հարց ու փորձ էր անում նրա առաջուայ պաշտօնի մասին: Ծերունին մանրամասն պատմում էր այն ճոխ ճաշերի և այն բոլոր լաւ փշրանքների մասին, ոչ իւր որդոց բաժին էր ընկնում այն մարդկանցից, որոնք նրան կաշառք էին տալիս, որ նա շուտով յայտնէր իրանց մասին թագաւորին. նա միշտ վատ տրամադրութեան մէջ էր լինում և սաստիկ պատժում սպասաւորներին ամենափոքր զանցառութեան համար: Էմանուէլը շատ անգամ ուզում էր ծիծաղել, երբ Եղիան անուանում էր նրան շրջմոլիկ և աղքատ:

— Դէհ, իսկ արքայադէնր, — պատմում էր ծերունին, նա էլ հօրիցը լաւ չէր, և մի միայն յիմարութիւն ու չարութիւն էր անում, իսկ երբ ուզում էին նրանից գանգատուել, նա անյայտանում էր և թագնւում մօր մօտ. նա նրան երես էր տալիս, ինչպէս և բոլոր մայրիկները, որոնք մի միայն փչացնում են իրանց զաւակներին — այս ասելիս, նա խոժոռած նայեց կնոջ երեսին: Թագաւորն արտաքսեց թագուհուն նրա համար, որ նա ամեն մի անպիտանի հետ խօսում էր և ժամանակ անցկացնում:

Այս խօսքը սաստիկ դիպաւ Էմանուէլի սրտին և նա խայթուածի նման տեղից վեր թռաւ:

— Դու ստո՛ւմ ես, աղաղակեց նա. թագուհին սուրբ էր: Եղիան զարմացած նայեց նրան:

— Քայց դու սրտեղից դիտես, հարցրեց նա:

— Ես, ես... ես ինքս տեսել եմ, ինչպէս նա բժըշկում էր հիւանդներին:

— Ահ, նա ինձ մի առանձին բարերարութիւն չի արիլ, իսկ նրա որդին էլ մի անգամ ծեծեց ինձ և այդ մինչև այս օր էլ չեմ մոռացել: Ես չէի կարող փոխարէնը հատուցանել, իսկ նրանից գանգատուել մեղքս գալիս էր, որովհետև դրա համար նրան սաստիկ կը պատժէին: Իսկ այժմ ես ինձ ու ինձ կատաղում եմ, որ խնայեցի նրան: Թող այն ժամանակ նրան մի քանիսը հասնէր. միւսնոյն է, հօ նրա պատճառաւ քամբաղդացայ:

\* \*

Մանուանգ շատ սիրեցին Էմանուէլին վաճառանոցում, ուր նա այն բանջարեղէնն էր ծախում, որ ինքն էր աճեցրել Եղիայի և նրա ընտանիքի համար: Ղատ ժամանակ չանցաւ և նա գնեց մի աւանակ, մի փոքր ժամանակից յետոյ էլ պարգևեց տանտիկնոջը մի կով:

Վանայքն ու օրիորդները նրան ծաղիկներ էին ընծայում, իսկ մանուկները նրան հեռուից տեսնելով, աղաղակում էին:

— Մանօիլ, Մանօիլ. այստեղ արի, ձիս յետ էլաւ...: Մայրիկս այժմ շատ մանած ունի, նա ուզում է որ դու ծախես, դու աւելի լաւ գնով կը վաճառես...: Քոյրիկս վա՛յր է ընկել, գլուխը պատուել է, պառկած է տանը. ա-

սում է՝ «Թող Մանօիլը գայ, — նա կարող է բժշկել, Սան-  
դուին էլ նա բժշկեց»:

Ամենքը նրա կարօտն էին քաշում և նա ամենի  
համար ժամանակ էր գտնում. սրա համար Եղիան շատ  
էր բարկանում. նա կամենում էր միայնակ ինքը օգտուելը  
նրա ծառայութեամբ և միշտ վախենում էր, թէ բան-  
ւորը մի գուցէ ուրիշներին տար նրա ունեցածը, մի գուցէ  
Մանօիլը շինէր և սկսէր մշակել իւր համար առանձին  
բանջարանոց:

Մի քանի թշուառների Էմանուէլը ստիպուած էր  
իւր խնամքի տակ առնել: Մի նեղլիկ փոքրիկ սենեակում,  
ուր հազիւ մի անկողին էր տեղաւորուած, պառկած էր  
փոքրիկ կոյր աղջիկ, որը նա և թուլացկոտ էր: Քանիցս  
պատահել էր, որ նա վայր ընկնելով, կոտորում էր ձեռքերը,  
այնպէս որ նրա երկու ձեռքն էլ ջարդ ու փշուր էին ե-  
ղած, և վէրքի անկանոն բուժուելուց կորցրել էին մարդու  
ձեռքի ձեւը: Ի վերջոյ թշուառը կոտորեց և ոտը, բոլորովին  
անկողին մտաւ և իւր սնունդը կարողանում էր միայն  
գուլպայ գործելով ճարել: Նրա քոյրը դուրս էր գալիս  
տնից աշխատելու ամբողջ օրով: Երբ երեկոյեան վերադառ-  
նում էր և տեսնում որ կոյրը քիչ է գործել, սկսում էր  
ծեծել նրան: Թշուառի ծեծուելու աղաղակը զրաւեց մի  
անգամ և Էմանուէլին: Նա խիստ լանդիմանեց չարասիրտ  
քրոջը, երկու աղջկան էլ կերակուր տուեց և ոտքը տանից  
չը դուրս դրեց, մինչև կոյրը լաւ չը կշտացաւ:

\* \* \*

Էմանուէլը մի խեղճ ծանօթ կին էլ ունէր, որի մարդը  
բանտարկուած էր: Պատանին լսել էր, որ նա սարսափելի

չքաւորութեան մէջն է և ոչ ոքի չի յայտնում: Էմա-  
նուէլը գնաց նրա մօտ. բայց նա ստիպուած էր երկար  
բաղիւել դուռը, և միայն այն ժամանակ բաց արաւ, երբ  
նա խոտոացաւ, որ նրա մարդուն համբաւ կը տանի նրա թըշ-  
ուառ կացութեան մասին: Գոժբաղդ կինն այնքան հիւանդ  
էր, որ մինչև դռները հազիւ կարողացաւ սողալով հաս-  
նել: Աննեակում, յարդի վրայ նստած էր մի փոքրիկ  
տղայ, թքում էր ձեռքին բռնած գդալին ու լիզում սե-  
փական թուքը: Անկիւնում բարձրաձայն լալիս էր փոք-  
րիկ աղջիկը: Մօր մօտ պառկած էր ծծի երեխան, որի ա-  
չերը դուրս էին ընկել բնից, այտերը տենդից այրում  
էին, և նա անընդհատ հագում էր:

Էմանուէլը գրեթէ յուսահատուեց՝ այդ սարսափելի  
թշուառութիւնը տեսնելով: Բայց նա գնը չէր այցելում  
թշուառներին: Նա ամեն տեղ մտցնում էր խաղաղութիւն  
և ուրախութիւն և շուտով ցեխն ու ամայութիւնը դարձ-  
նում էր մաքրութիւն ու բարօրութիւն:

Այտեղ բերում էր նա առողջարար արմտիքը և ա-  
մենօրեայ աշխատանքը: Աինը ինքն ամաչում էր մարդոց  
երևալու: Նրա մարդը, որը մի քանի տարի բանտարկուած  
էր մնացել, վերջապէս ազատուեցաւ: Բանտից նոր ազա-  
տուած լինելով, մի առ ժամանակ նա չէր կարողանում  
գործ ճարել, ամեն մարդ քաշում էր նրա հետ գործ բըռ-  
նելուց: Բայց Էմանուէլը խօսում էր նրա մասին այնպիսի  
ջերմ համակրելի խօսքերով, որ դէպի չար մարդն ունե-  
ցած անհաւատարմութիւնը վերջապէս ոչնչացաւ:

\* \* \*

Այս բարի պատանու բոլոր բարի գործերը դժուար է անգամ մի առ մի թուել: Եղիայի որդիքը նրան ամենից աւելի էին սիրում, կինը միշտ Մանօիլին խորհրդի և օգնութեան էր կանչում, այնպէս որ Եղիան վերջապէս սկսեց նախանձել նրան:

Եղիան սկսեց նրա հետ օրէցօր առաւել ու առաւել վատ վարուել և բարձել նրա վրայ չափից դուրս ծանր աշխատանք, բայց էմանուէլը երբէք չէր գանգատուում. նա մտքովն անգամ չէր անցկացնում, որ Եղիան կարող էր նախանձել նրան: Նա կարծում էր, որ Եղիան ի բնէ չարասիրտ է:

Մի անգամ նա, ըստ սովորութեան, գնաց վաճառանոց, ծախեց Եղիայի բոլոր ապրանքը, ապա և իւրը, բայց իւր սեփական ապրանքի համար ստացած փողը իսկոյն բաժանեց աղքատներին:

Յանկարծ մօտեցաւ նրան մի խեղանդամ մարդ և սկսեց ողորմութիւն խնդրել: Պատանին երբէք Եղիայի փողերին ձեռք չէր տուած, բայց այս անգամ նա մտածեց, որ կարող է շուտով հատուցանել նրան և թշուառի գրպանը գցեց մի քանի դրամ տիրոջ փողից:

Այդ վայրկենին մէկը բռնեց նրա օձիքը:

—Ա՛յ դու գո՛ղ աւաղակ, ա՛յ դու աղքատ անպիտան,— աղաղակում էր Եղիան, վերջապէս ես քեզ բռնեցի: Ես քեզ ցոյց կը տամ, դու սո՛ւտ ճգնաւոր, թէ՛ ի՛նչ է նշանակում ունեցածս գողանալ և խելբազան անել կնոջս:

Նա բարձրացրեց մահակը և սկսեց նրանով հարուածել էմանուէլին:

Յաւից և անպատուութիւնից պատանու արիւնը գլուխըն ընկաւ: Սկզբում նա կամենում էր յետ մղել ձերուհուն, բայց իսկոյն զգաստացաւ, ձեռքը իջեցրեց և անշարժ կանգնեց հարուածների տակ:

Սակայն երկար չը կարողացաւ հարուածել Եղիան իւր բոլորովին անմեղ բանուորին: Նրանց շուրջը խոնուեց ամբոխը և կոյր աղջկայ քոյրը ուղղակի բռնեց չար ծերուկի ձեռքը:

—Ամօթ չէ՞ քեզ, որ ձեծում ես քո ու իմ բարերարին, աղաղակում էր նա:

Էմանուէլը դարձրեց իւր մեռելային գունատ դէմքը տիրոջը և վառ աչքերով ասաց.

—Այժմ քեզ հետ հաշիւս աւարտեցի, իմ ծառայ Եղիա: Այս խօսքից յետոյ մի ականթարթում անյայտացաւ:

\*  
\*\*

—Տէր իմ Աստուած, աղաղակեց Եղիան, յուսահատ բռնելով գլուխը: Այս հօ արքայազն—թագաժառանգն էր:

Վաճառանոցում մեծ իրարանցում եղաւ: Ոմանք վազեցին որոնելու արքայազնին և ամենի սիրելի Մանօիլին, միւսներն սկսեցին հայհուել ու ձեծել Եղիային, որ նա իւր խիստ վարմունքով խանդարեց ընդհանուրի երջանկութիւնը:

Բայց Եղիան առանց այդ էլ անմխիթար էր, մինչ գեռ Մանօիլին բոլորովին չը կարողացան գտնել: Մանօիլն այնպէս արագ էր վազում, որպէս միայն կարող էին տանել ուժեղ երիտասարդի ոտքերը. նա մտաւ եղիպտացորենի արտը, ընկաւ գետին լայն տեղիների ներքոյ և

այնպէս դառնազին լաց եղաւ, որպէս չէր լաց եղել իւր սուրբ մայրիկի մահուանից յետոյ:

— Այժմ եմ իմանում, թէ ինչ է մարդկային ապերախտութիւնը, — հեկեկում էր նա և այնպէս ամուր սեղմում բռունցքը ատամներին, որ նրա շրթունքներն արիւնտոււեցան: Օ՛հ, մայր, մայրիկ, մայրիկս, ես ամեն ինչ կը տանեմ, բայց ոչ նախատինքը:

Հազիւ թէ կարողացել էր արտասանել այս խօսքը, որ արդէն գտնուում էր ճգնաւորի մօտ: Ծերունին քաղցրութեամբ դրեց ձեռքը նրա ուսին:

— Նայիր այտեղ, ասաց նա. ճանաչում ես արդեօք քո փոքրիկ Քաղային:

Ազաճ նայում էր Իմանուէլը հրաշագեղ օրիորդին, և կոյն էլ նայեց նրա վերայ իւր կապոյտ, փայլափայլող աչերով, և իսկոյն և եթ, կարծես վարագուրով ծածկեց աչերը իւր մետաքսեայ արտւանուէնքներով: Յերկրութիւնից նա չը կարողացաւ մի բառ անգամ ասել, մինչև անգամ մոռացաւ նրան ողջունելիս մեկնել ձեռքը և միայն նայում էր նրա վրայ լայն բացուած աչերով:

— Իրաւացի չէ, որ ես քո զանձն աւելի լաւ եմ պահպանել, քան թէ դու ծառայիդ փողերը, ասաց ծերունին: Ես այս զանձը ոչ ոքի չեմ տուել:

Իմանուէլը երկիւղով նայեց իւր գաստիարակին և խոնարհեց զուխը, որպէս մեղաւոր երեխայ:

— Չի կարելի ուրիշի փողերով բարութիւն անել, շարունակեց ծերունին: Քո կողմից այդ սխալ էր:

— Հօ թանկ վճարեցի դրա համար, խօսեց պատանին և նրա այտերը կարմրեցին, իսկ աչերում երևացին արցունքներ:

— Բայց և այտեղ քեզ մի այնպիսի պարգև է սպասում, որին դու դեռ լիովին արժանի չես դարձած, ասաց ճգնաւորը, մատնացոյց անելով Քաղայի վրայ, որը զարմացած նայում էր թէ մէկին և թէ միւսին: Գէ՛հ այժմս, քանի դեռ նորից չես գնացել գործիդ, զուարճանանք մի քանի ժամ:

Քաղան քարայրի շէմքում պատրաստել էր համեղ ճաշ:

\* \* \*

Այտեղ ամեն ինչ փոխուել էր նրա կանացի ձեռքի շնորհիւ: Քարայրի պատերից կախ էին արած նրա ձեռագործ գորգերը, ճգնաւորը հազին ունէր նրա գործած մաքուր շապիկը. ինքը Քաղան հագնուած էր շատ մաքուր և շնորհքով: Նա հպարտութեամբ ցոյց էր տալիս Իմանուէլին այն գրքերը, որ կարգացել էր իւր պատկառելի գաստիարակի հետ:

Լսելով նրա խօսքերը, Իմանուէլը կրկին տխրեց:

— Իսկ ես օրէցօր մոռանում եմ մինչև անգամ դիտեցածս, ասաց նա: Սովորելու համար բոլորովին ժամանակ չունիմ: Ես քեզ արժանի չեմ լինիլ, Քաղա:

— Ուրիշ գործ ձարիր քեզ համար, խորհուրդ էր տալիս ճգնաւորը, իսկ աշխատածդ գործ գիր ուսմանդ համար:

Իսկ աղքատները, հարցրեց Իմանուէլը:

— Բայց չէ որ աշխարհումս ուրիշ տեսակ ողորմածութեան գործեր էլ կան, պատասխանեց ճգնաւորը: Կայ և հոգևոր ողորմածութիւն:

Պատանին քարայրում մի քանի երջանիկ ժամեր անցկացրուց: Բայց արևը մայր էր մտնում և այրում էր

լեռները շուշանի և ծիրանի փայլով. հովտի վրայով արդէն սփռուում էին կապտադոյն ստուերները:

— Գու առաւել վաղ պէտք է ճանապարհ ընկնիս, քան թէ մութը կրնկնէր, ասաց ճգնաւորը:

Էմանուէլը վշտալի նայում էր հեռու. նրա սիրտը սաստիկ տխուր էր: Նրա համար Բաղան անյաղթելի մագնիս էր, այն ինչ մարդոց հետ ունեցած վերջին դէպքը նրա սրտում այնքան դառնութիւն էր թողել:

Ճգնաւորը կարծես թէ չէր հասկանում պատանու դրութիւնը և վճռաբար ու խիստ շտապեցնում էր նրա գնալը: Էմանուէլին թւում էր, որ ծերունին սկսել է իւր հետ առաւել խիստ և անողորմ վարուել և թէ ամբողջ աշխարհը նրա վերաբերութեամբ փոխուել է:

Սովորականից առաւել դանդաղ էր իջնում նա սարից: Փօտ տասն անգամ նա լետ նայեց: Բաղան կանգնած էր քարայրի շէմքին, ծածկուած վերջնալոյսի ճառագայթներով: Նա գլխով էր անում և ձեռքը կուրծքին տանում մնաս բարեաւ ասելիս: Եւ յանկարծ պատանու սրտում մըրմնջում էր նոր, մինչ այդ ժամանակ անյայտ վիշտ:

Ինչո՞ւ չը թողեց նրան ծերուկը զիշերելու: Ինչո՞ւ չէր կարող սպասել նա քարայրում մինչ առաւօտ. ինչո՞ւ պէտք է նա այդպիսի նեղութեամբ ձեռն բերէր գիտութիւնը, որը կարող էր հաւասարացնել նրան զեղեցիկ օրիորդին: Այս ամենը ծերունու կողմից մի ինչ որ անհասկանալի խստասրտութիւն էր:

Այսպէս մտածելով, Էմանուէլը պառկեց մի ժայռի տակ և քնեց:

Արագում տեսաւ նա մօրը: Նա ձեռքը դնում էր հիւանդների վրայ և բժշկում նրանց: Պատանին զարթնեց և վեր թռաւ: Նրա գլխով հանդարտ շողշողում էր աստեղագարդ երկինքը:

— Ես կամենում եմ բժիշկ դառնալ և հիւանդներ բժշկել, գոչեց նա, արագ արագ իջաւ հովիտը և զնաց դեղագործի մօտ:

— Ինձ ձեր օղնական բնգունեցէք, ասաց նա նրան:

— Բայց ինչ գիտես դու:

— Ես կարող եմ արմտիք հաւաքել,.... ամեցնել գրանց.... և ուրիշ ոչինչ:

Գեղագործը ժպտաց: Բայց երկար չը յաջողուեցաւ նրան ծիծաղել, որովհետեւ պատանին, որ այժմս անուանում էր Մանէյ, շուտով ապացուցեց նրան իւր զարմանալի ընդունակութիւնը և անսովոր աշխատասիրութիւնը:

Բացի զեղատան սովորական գործերը, նա ամեն գիշեր սովորում էր ինքը և ձրի դասեր տալիս չքաւոր մանուկներին: Ահա այս էր պատանու բարեգործութիւնը, որովհետեւ աշխատած փողերը նա գործ էր դնում իւր ուսման վրայ:

Նրա զեղատուն մտնելուց շատ չանցած, ամբողջ թագաւորութեան մէջ յայտարարուեցաւ մեծ ցնծութեան տօն կատարելու. թագուհին պարգևել էր թագաւորին արուղաւակ, որը կորած արքայազնի փոխարէն հրատարակուեցաւ զահաժառանգ:

— Իսկ իմ մասին էլ ոչ ոք չի մտածում, ասում էր Էմանուէլը տխուր ժպտով, և աշխատում պարապել ամբողջ գիշերներ:

—Լաւ բժիշկին էլ նոյնպէս մի բան է: Թող ուրեմն եղբայրս թագաւոր լինի, իսկ ես բժիշկ:

Նրա գերմարդկային աշխատասիրութիւնը շուտով իւր պտուղը բերեց. քիչ չօգնեց նրան և մօրից ժառանգած բնական տաղանդը: Նա դեռ չէր վերջացրել ուսումը, որ նրան արդէն սկսեցին կանչել թէ մերձակայ և թէ հեռաւոր գիւղերը և ամեն տեղ, ուր միայն հիւանդներ կային:

Նա տիրութեամբ էր մտաբերում Բագային, բայց համոզուած էր, որ եթէ արժանի կը լինի, նորից կը տեսնի նրան: Այդ ժամանակ ուսման սէրը նրանում միւս բոլոր զգացմունքներից առաւել զօրեղ էր: Առաջին անգամն էր, որ կեանքի մէջ նա մտածում էր ոչ միայն ուրիշների՝ այլ և ինքն էլ իւր սեփական սլօթերով մարդոց մէջ մի նշանակութիւն ունենալու մասին: Մտքի սաստիկ լարելուց նա մաշուում էր, նրա աչքերը խորն էին ընկել և տենդային դրութեամբ փայլում էին անցուցած անքուն գիշերների պատճառով:

Այժմ էլ ամենքը այնպէս սիրում էին նրան, ինչպէս որ այն ժամանակ, երբ Մանօիլ էր կոչւում: Քաւական էր միայն Մանէլ բժշկի անունը տալ, և հայեացքներն առաւել պայծառանում էին, վշտահար սրտերում ծագում էր յուսոյ ճառագայթը:

\* \* \*

Փոքրիկ արքայազն—թագաժառանգը այնպէս հիւանդացաւ, որ բոլոր շրջապատողները յուսահատութեան մէջ ընկան: Թագուհին լսել էր երիտասարդ բժշկի մասին, որ շատ է սիրում մանուկներ և հրամայեց կանչել նրան որդու համար:

Ուժգին բարախող սրտով մտաւ Իմանուէլը հայրական պալատը, ուր ամեն ինչ վիշեցնում էր նրան իւր մանկութիւնը և որ տեղից ինքն իրան արտաքսել էր պատանեկական բուռն եռանդով:

Հալըը չը ճանաչեց նրան և վրդովուած հետևում էր աչքերով, երբ սա մօտեցաւ հիւանդի անկողնին: Իմանուէլը խնամքով և քնքշութեամբ զննեց իւր համարիւն եղբորը:

—Ինձ թուում է, որ սա կը փրկուի, ասաց նա լըրջութեամբ:

Թագուհու խիստ, հպարտ դէմքի վրայ, որից նոյն իսկ թագաւորը, նրա ամուսինը, վախենում էր, արցունքներ երևեցին:

Իմանուէլը զիշեր ցերեկ անց էր կացնում մանկան անկողնի մօտ. վերջապէս մի գիշեր մանուկը լաւ քնեց: Պատանի բժիշկը խնդրեց ծնողներին զնալ հանգստանալու, ասելով որ վտանգն անցել է և խոստացաւ որ ինքը կը հսկէ հիւանդին:

Կէս գիշերին մօտ մանուկը զարթեցաւ, թաթիլներով փարուեցաւ եղբոր պարանոցովը և համբուրեց նրան:

—Ասա Իմանուէլ, շշնջաց նրան բժիշկը:

—Իմանուէլ, կրկնեց մանուկը բարակ ձայնով այնպիսի քնքշութեամբ և դուռանքով, որպիսին երիտասարդը չէր լսել արդէն շատ տարիներ:

Սրանից չետոյ մանուկը նորից քնեց:

Առաւօտը նա արդէն բոլորովին ազատ էր վտանգից և ծնողներն այնպէս շնորհակալ էին իրանց զաւակի ազատողից, որ չէին կամենում բաց թողնել նրան: Բայց ոչ խնդիրքը, ոչ խոստումները, չը կարողացան համոզել բժըշ-

կին մնալ, այնպէս որ թագուհին, որ մի քանի ժամ առաջ այնպէս ողորմած էր դէպի նա, սաստիկ զայրացաւ:

\* \*

Բոլոր հոգևով թռչում էր այժմ Էմանուէլը դէպ իւր Բաղան: Նրան թուում էր, որ նա արդէն կարող է ամուսնանալ նրա հետ, որ այժմ ինքն արդէն արժանի է այդ երջանկութեանը:

Բայց ահա մի անգամ նրա սենեակը անսպասելի կերպով մտաւ ճգնաւորը:

— Զաւակս, ասաց նա նրան, և նրա մորուսն ու շքերթունքները սաստիկ դողում էին, — ես շատ կասկածում եմ, որ այն պարզւեր, որին դու լիովին արժանի ես, մեր ձեռքից թռած լինի: Ես ուղարկել էի Բագային հովիտը որ այնտեղ, ամբոխի մէջ, կատարելագործի իւր կանացի առաքինութիւնները, իսկ այժմ ինձ լուրեր են հասնում, որ նա պատրաստուում է մարդու գնալ:

Էմանուէլի արիւնն այնպէս սաստկութեամբ ընկաւ գլուխը, որ աչերից կայծեր ցայտեցին:

— Ահա, ահա թէ ի՞նչ հայրաբար ես խնամել դու, գոռաց նա: Իսկ ես յոյս ունէի քո ձեռքից ստանալու նրան: Ահ, դու ենթարկում էիր ինձ գերմարդկային փորձութիւնների, իսկ քո բոլոր խոստումներդ սուտ էին: Մհ, ես կը խելագարուիմ:

Նա բռնեց ծերուկին, ուժգին թափ տուեց և լետ մղեց իրանից: Ճգնաւորը տատանուեց և վայր ընկաւ: Ընկնելիս նա գլուխը խփեց դրան սուր ծայրին և արիւնաբամ ջարդ ու փշուր եղաւ: Ուշքի գալով, Էմանուէլը

ծունկ չողեց ծերունու մօտ և ամեն կերպ աշխատում էր ուշքի բերել նրան: Վերջապէս ծերունին բացեց աչքերը և հազիւ ոյժը հաւաքելով, արտասանեց՝

— Ապերախտ մանուկ:

Այս խօսքից լետոյ նրա աչքերը նորից փակուեցան, նա հանդարտ հառաչեց և վախճանուեցաւ պատանի բժշկի զբրկում: Էմանուէլը կանչում էր նրան ամենաթանկագին անուններով և թողութիւն էր խնդրում, բայց արդէն ուշ էր:

\* \*

Այս ծերունու հետ միասին նա կորցրեց ամեն բան, ամեն բան աշխարհումս: Հօրը, բարեկամին, հարսին և մինչև անգամ իւր անդորր՝ անմեղ սիրտը:

Նա այնտեղից անյայտացաւ, և թափառում էր միայնութեան մէջ, Բուէջի լեռան գազաթին: Բայց այս միայնութիւնը երկար չը տուեց: Նրան շուտով ճանաչեցին, որովհետև նա սկսեց բժշկել հովիւների հիւանդ ոչխարներին: Ոչխարների հետ միասին դիմեցին նրան և մարդիկ: Նրանք համարում էին նրան հրաշագործ և անուանում էին ուղղակի «Այր»: Ով և հիւանդանար, ով և դրժբաղդութեան մէջ ընկնէր, ամենքն իսկոյն վազում էին «Այրի» մօտ, իսկ նա միշտ այնպէս լուրջ էր, կարծես թէ հարիւր տարեկան լինէր: Նրա սրտի վրայ այնպիսի ծանր քար էր դրուած իւր կատարած չարագործութիւնից լետոյ, որ մոռացել էր անգամ, թէ ինքը երիտասարդ է:

Ամբողջ ժամերով աշխատում էր նա իւր երեւակայութեան մէջ պատկերացնել մօր դէմքը, բայց այն դժբաղդրոպէից նա այլ ևս չէր յայտնում նրան: Այսպէս սպրում

էր այս ամենին անձանօթ խորհրդաւոր մարդը, միայնակ իւր մեծ վշտի հետ, և այնքան բարի գործեր էր կատարում, որքան միայն կարողանում էր, միշտ հեռացնելով իրանից ամեն շնորհակալութիւն: Նրա սրտում անմուռնջ հնչում էին մեռնող բարեկամի խօսքերը.

— Ապերախտ մանուկ:

\* \* \*

Յանկարծ փոքրիկ գահաժառանգը նորից հիւանդացաւ, բայց բարի Մանէյ բժիշկին արդէն անյայտացել էր:

Արքայագնը անդադար ադադակում էր՝ «Իմանուէլ» Իմանուէլ». շրջապատողներն ասում էին, որ մանուկն անպատճառ կը մեռնի, որովհետեւ մեռած եղբօրն է կանչում, որին երբէք չի տեսել:

Եւ իրաւի, մի քանի օր չանցած, մանուկը մեռաւ: Վշտից մեռաւ նոյնպէս թագաւորը...: Ժողովուրդը տըխրում, ցաւում և վրդովւում էր, առանց թագաւոր մնալով: Յանկարծ տարօրինակ լուրեր տարածուեցին:

— Իմանուէլը կենդանի է, Իմանուէլը կենդանի է: Խօսում էր ժողովուրդը:

Եւ այդ լուրերն անցնում էին զիւղից զիւղ, քաղաքից քաղաք: Այս քիչ չէր զիտէր, թէ առաջին անգամ ո՞վ էր արտասանել այդ խօսքը: Այստեղ այն տեղ պատահել էի մի հրաշագեղ օրիորդի, որը ճանապարհորդում էր մի պատկառելի ձերուհու հետ: Նրանք ամեն տեղ հարց ու փորձ էին անում Իմանուէլի մասին և որոնում նրան: Այդպէս հասան նրանք մինչև Քուէշիի գաղաթը և հովիւները ցոյց տուին նրանց ճանապարհը գէպի «Ալը»:

\* \* \*

Բժիշկը միայնակ, գլուխը ձեռքի վրայ դրած՝ տխուր նստած՝ նայում էր հեռուն: Երկար նստած էին նրանք դէմ առ դէմ նրանից քիչ հեռու և նայում նրան: Յանկարծ նա նայեց նրանց վրայ և աղաղակեց.

— Բնդա, Եղիան, դուք այստեղ... ինչ էք ուզում ինձանից:

— Մենք պտրում ենք մեր թագաւորին, պատասխանեց Եղիան, ծունկ խոնարհելով նրա առաջ: Օ, թագաւոր, կը ներէք երբ և իցէ իմ ապերախտութիւնը:

Իմանուէլը ցնցուեց:

— Ե՛ս, ներեմ, խօսեց նա: Օ, փառք Աստուծոյ, որ կարող եմ ներել քեզ անկեղծ սրտով: Իսկ դու ինչ ես անում Բնդա, ո՞ւր է քո մարդը:

Նրա շրթունքների վրայ դառն ժպիտ խաղաց:

— Ես մարդ չունիմ, պատասխանեց նա: Ես քեզ միշտ հաւատարիմ եմ մնացել: Ես որոնում էի քեզ քո բոլոր թագաւորութեանդ մէջ: Եղբայրդ ու հայրդ մեռան:

Իմանուէլը շեշտակի վեր թռաւ տեղից և որպէս զի չը վաւր ընկնէր, բռնեց ժալուի դուրս ցցուածքը:

— Բնդա, խօսեց նա, ես անարժան եմ քեզ: Ես սպանցի մեր հօրը:

— Ես զիտեմ, ասաց նա: Ես այդ վաղուց տրդէն զիտեմ: Նա երևեցաւ ինձ երազում և մինչև անգամ ցոյց տուեց այն տեղը, ո՞ւր կարող էի գտնել քեզ:

— Եւ դու եկար ինձ մօտ:

Իմանուէլը ծածկեց երեսը ձեռքերով, բայց աղջիկը լիտ քաշեց ձեռքերը և ընկաւ նրա զիրկը:

Իսկ նրանց շուրջը յանկարծ լուեցան ձայներ՝

— Կեցցէ թագաւորը, մեր թագաւորը: Մեր բարի, բարի թագաւորը: Որբերի հայրը, թուլերի պաշտպանը, նեղեալների մխիթարիչը: Ուրեմն կեցցէ մեր թագաւորը:

Եւ ահա նրանք, որոնց նա բարիք էր արել, խոնուեցան նրա շուրջը, համբուրում էին նրա ձեռները, հանդերձներն ու ոտքերը, և անուանում էին Մանօիլ, Մանէյ, բժիշկ և թագաւոր: Նա կանգնած էր ապշած և նայում կրճքին սեղմուած Բագային. ապա բռնեց նրա ձեռքը և բարձրաձայն գոչեց:

— Ահա այս օրիորդներից ամենաընտիրն էլ ձեր թագուհին է: Առանց նրան գուք երբէք չէիք գտնիլ ինձ:

\* \*

Ահագին ամբոխը ուղեկցում էր նրան մինչև պալատը: Ճանապարհին միանում էին նոր խմբեր և բոլորն էլ պատմում միմեանց նրա բարեգործութիւնները:

Եղիան դարձեալ պալատի սպասաւոր դարձաւ և գտաւ այն բոլոր ծառաներին, որոնք կորած արքայազնին գտնել չը կարողանալու պատճառով արձակուած էին: Բագան ապրում էր ուրախ և երջանիկ, իսկ երբ մարդու ճակատը մուսլուում էր կեանքի ամենաճանր ըուպէները յիշելով՝ նա ցրւում էր թախծի կնճիռները քաղցր համբուրներով: Նրանք ունեցան շատ զեղեցիկ՝ առողջ որդիք, բայց այժմ այդ որդւոց որդիքն էլ վաղուց արդէն հողի տակն են:

Իսկ լեռը մինչև այս օր էլ կանգնած է առաջուան տեղը և նրան ըստ հնուցն կոչում են «Օմուլ»՝ որ նշանակում է «Այր»...:

«ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ» գրախանութում վաճառում են մեր հետևեալ  
Քարգանութիւնները՝

- I. «ՄՏԱԻՈՐ, ՖԻԶԻԲ. ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՆՔՆԱԿՐ-  
ԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ», հեղ. պրոֆեսոր ԶՕՆ ՍՏԻՒԱՐՏ  
ՔԼԷԿԿԻ, (հրխտասարգիների համար). . . . . 60 կ.
- II. «ՄԱՅՐԱԿԱՆ ԴԵՍԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ», հեղ. Ժ. ԲԱՄՔՍՍ-  
ՍՕՆԻ (ծնողների եւ վարժուհիների համար) . . . . . 40 կ.
- III. «ԿԵՈՋ ԿՈՉՈՒՄԸ ԵՒ ԴԵՍԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ»,  
հեղ. ԼՈՒԻՋԸ ԲԵԻՆՆԵՐԻ (ճնողների եւ վարժուհի-  
ների համար). . . . . 40 կ.
- IV. «ՊԵՊԻ ՉԵՌՆՈՅՆԵՐ», Մանկական վեպ. . . . . 10 կ.
- V. «ԱՆԴԵՄԱՆՈՅՑ», Մանկական վեպ ԱՆԴԵՐՍԷՆԻ. . . 15 կ.
- VI. «ՓԱՅԼՈՒՆ ԿՈՊԷԿ», Մանկական վեպ ԲԱՌԷՆԻ. . . 25 կ.
- VII. «ԱՋԵՆՆՅՈՒՆ ԵՐԵԿՈՅ ԳԻՂՈՒՄ», ժողովել 1 ար. . . 25 կ.
- VIII. «ԺԱՆՕ ԵՒ ԺԱՆԷՏ», օպերա.— լիլ. մէկ արարուածով. 40 կ.
- IX. «ՈՍԿԵ ԲԶԷՋ», ժողովրդական վեպ ԷՒԳԵՆ ՊՕ. . . 20 կ.
- X. «ԲՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ», պրոֆեսոր  
ԱՆԴՐԷԱՍ ԳԱՔՐԷԼԻԻ. . . . . 60 կ.
- XI. ԿԵՐՄԷՆ ՍԻՎԸ «ՕՄՈՒՂ» Մանկական վեպ . . . . 8 կ.

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ են և հետզհետեւ  
լուր կը տեսնին մեր հետևեալ աշխատութիւնները՝

- 1) «ՓԱՐԱՌՈՒՆԻ ԱՂՋԻԿԸ», պատմական վեպ Գ. ԷՔԷՐՍԻ:
- 2) «ԻՋԽԱՆՆ ՈՒ ԱՂՔԱՏԸ», պատմական վեպ ՄԱՐԿ ՏՎԵՆԻ:
- 3) «ԱՄԵՐԿԱՅԻ ԳԻՒՏԸ» ԼԵԱՄԷ ՖԼԵՕՐԻ:
- 4) ԱՆԴԵՐՍԷՆ՝ «ԻՆՉ ԷՐ ՊԵՏՄՈՒՄ ԼՈՒՍԻՆԸ» (25 մանկ. վեպ):
- 5) «ՕՐԷՐԼԷՅՆԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԵՐԸ»:

803

0004725

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004725

